



**«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»**



ՀԻՄՆԱԴՐԱՄ

**Հերթական ատեստավորման ենթակա
ուսուցիչների վերապատրաստման
դասընթաց 2023**

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔ

Ուսումնական հաստատություն՝

Աղ. Խանջյանի անվան թիվ 53 հիմնական

դպրոց

Թեմա՝

**ԲՆԱՊԱՀՊԱՆԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ**

Ուսուցիչ՝

Նունե Ապիկյան

Առարկա՝

Կենսաբանություն

Մարզ՝

Երևան

Բովանդակություն

ԲՆԱՊԱՀՊԱՆԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ.....	3
Ներածություն	3
Շրջակա միջավայրի աղտոտումը.....	6
Անտառահատում	12
Բնական պաշարներ	13
Էկոլոգիապես մաքուր տրանսպորտ	14
Եզրակացություն	17
Առաջարկություններ.....	18
Գրականության ցանկ	21

ԲՆԱՊԱՀՊԱՆԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Ներածություն

Աշխարհը զայրացել է. անխնա և էգոիստաբար է մոտենում բնությանը չգիտակցելով այդքան հարվածներին, թե ինչպիսի պատասխան կարող է տալ հենց ինքը՝ բնությունը:

Մարդկությունը մշտապես կյանքը բարելավելու, նոր պայմաններին ձգտելու, ավելի հարմարավետ և բարեկեցիկ ապրելու նոր մեթոդներ է մտածում մշակում ու կիրառում դրանց իրականացման ճանապարհին անընդհատ ոտնահարելով և շրջանցելով բնության շահերը ցուցաբերելով բացարձակ անտարբերություն շրջակա միջավայրի և իհարկե բնության հանդեպ ենթարկելով անընդհատ ցնցումների պահանջում է ամենինչ չտալով գրեթե ոչինչ: Ի դեմս այս ամենի բնությունը բարձր հանդուրժողականություն ցուցաբերելով դեռ համբերում է...:

Սակայն կյանքը բումերանգ է և ինչպես հայտնի ասացվածքում է ասվում. << ինչ ցանես այն կհնձես >>, գալու է այն ժամանակը երբ մարդկությունը կբախվի արդեն անշտկելի իրականությանը: Ուստի հորդորում եմ, խնդրում եմ, տեղեկացնում և կոչ եմ անում եկեք համախմբվենք, քայլեր ձեռնարկենք մի շարք բնապահպանական խնդիրների լուծման համար, որպեսզի կանխենք մարդկությանը սպառնացող մեծագույն աղետը քանզի մենք ենք կրթում, դաստիարակում, փոխանցում այնպիսի հիմնավորված դրույթներ, ըստ որի սովորողը կունենա դիրքորոշում՝ տվյալ դեպքում, բնապահպանության պաշտպանության անհրաժեշտության վերաբերյալ: Ի սկզբանե մարդն օգտվել է բնությունից, օգտագործել է բնության ուժերն ու բարիքները հանուն իր գոյատևման ու բարօրությունը: Բնապահպանությունը միջոցառումների մի համակարգ է, որն ապահովում է բնական միջավայրի էկոլոգիական 2 հավասարակշռությունը, բնական ռեսուրսների պահպանումը և վերականգնումը:

Բնապահպանական միջոցառումները բազմաթիվ են, նաև բազմաբնույթ:

Բնության տարրերն ու երևույթները կորզվում, անջատվում են իրենց բնական միջավայրից, մշակվում են փոխում են իրենց նախնական վիճակը և դառնում աշխատանքի առարկա ու միջոց:



Շրջակա միջավայրի վիճակը: Երկրի առանձին շրջաններում բնական միջավայրի անշրջելի փոփոխությունների վտանգը ավելի է ընդարձակվել մարդու տնտեսական գուժունեության մասշտաբների հետ մեկտեղ: Բնապահպանության համաշխարհային միության տվյալներով (The World Conservation Union) 2008 թ. վերջին 500 տարում ամբողջովին բնաջնջվել են կենդանիների 844 տեսակ, իսկ կաթնասունների 23%-ը և թռչունների 16%-ը կանգնած են վերացման վտանգի առաջ: 80-ականների սկզբին միջինում կենդանիները վերանում էին ամեն օր մեկ տեսակ /ենթատեսակ, իսկ բույսերը ամեն շաբաթ: Ամեն տարի այրվում են համարյա 1 մլրդ. տ. պայմանական վառելիք և մթնոլորտ են արտանետվում միլիոնավոր տոննա ծծմբի ածխածնի, ազոտի օքսիդներ, որոնց մի մասը հետ է վերադառնում թթվային անձրևների, մրի, մոխրի, փոշու տեսքով (նայել մթնոլորտի աղտոտումը): Հողը և ջուրն աղտոտվում են արդյունաբերական և կենցաղային հոսքերի (հարյուրավոր միլիարդ տոննա), նավթամթերքների (մի քանի միլիոն տոննա), պարարտանյութերի (մոտ հարյուր միլիոն տոննա), պեստիցիդների, ծանր մետաղների, ռադիոակտիվ թափոնների միջոցով: Առկա է երկրի օզոնային

շերտի քայքայման վտանգ (նայել Օզոնային անցք): Մթնոլորտի ինքնամաքման կարողությունն արդեն մոտ է սահմանին: Շրջակա միջավայրի անվերահսկելի փոփոխության վտանգը և դրա հետևանքով երկրի վրա կենդանի օրգանիզմների, այդ թվում և մարդու, գոյության վտանգը պահանջում էին բնության պահպանությանն ուղղված որոշակի չափանիշների մշակում՝ բնական ռեսուրսների ճիշտ օգտագործում: Այս միջոցներին են դասվում անթափոն տեխնոլոգիաների մաքրման շինությունների ստեղծումը, պեստիցիդների օգտագործման կարգավորումը, թունաքիմիկատների արտադրության դադարեցումը, հողատարածքների բարելավում, ինչպես նաև պահպանվող տարածքների (ազգային պարկեր, արգելանոցներ), հազվագյուտ և անհետացող կենդանիների և բույսերի բուծման կենտրոնների (այդ թվում երկրի գենոֆոնդի պահպանում) ստեղծում, ազգային և համաշխարհային Կարմիր գրքի կազմում: Բնապահպանական միջոցները նախատեսված են հողային, անտառային, ջրային և այլ դաշնային օրենսդրություններում: Մի շարք երկրների պետական բնապահպանական ծրագրերի իրականացումը հնարավորություն է տալիս բարելավել շրջակա միջավայրի առանձին շրջանների որակը (օրինակ բազում տարիներ տևած և թանկ արժեք ունեցող մի ծրագրի իրականացման արդյունքում հնարավոր եղավ վերականգնել Մեծ լճերի ջրերի որակն ու մաքրությունը): Միջազգային մասշտաբով, միջազգային առանձին կազմակերպությունների ստեղծման հետ մեկտեղ, բնապահպանական առանձին խնդիրների վրա մեծ ազդեցություն ունի ՄԱԿ-ի ծրագիրը:<https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D6%80%D5%AF%D5%AB%D6%80>

Շրջակա միջավայրի աղտոտումը

Աղտոտումը լուրջ խնդիր է մարդու առողջության, տեսակային բազմազանության, շրջակա միջավայրի վատթարացման համար: Չհարմարվելով շրջակա միջավայրի փոփոխություններին՝ կենդանի օրգանիզմները ձեռք են բերում նոր փոփոխություններ, որոնք կհանգեցնեն հիվանդությունների առաջացմանը, բնական արհավիրքների ժամանակ ժամանակ ջրում կամ հողում, մարդու օրգանիզմի նյութափոխանակության համար անհրաժեշտ միկրոտարրերի պակասից առաջանում են մի շարք հիվանդություններ, օրինակ՝ ջրում ֆտորի պակասը առաջացնում է ոսկրերի փտում, իսկ յոդի դեպքում՝ բոլորիս հայտնի խափա հավանդությունը:

Մանրեններով հարուստ խմելու ջուրն առաջացնում է ստամոքսաղիքային հիվանդություններ, է հիպերտոնիկ հիվանդության և գերհոյզային (սթրեսային) վիճակի համար պատճառ կարող է դառնալ չափից դուրս աղմուկը, ճառագայթները ր ակտիվ նյութերը մեծ քանակությունը նպաստավոր պայման ոն սպիտակարյունության և քաղցքեղի առաջացման համար: Որոշ քիմիական նյութերի առկայությունն մթնոլորտում առաջացնում է ալերգիական հիվանդություններ և բրոնխային հեղձուկի: Աղտոտման մակարդակը անհրաժեշտ է հսկել սահմանային թույլատրելի կոնցենտրացիաներով

Տարբերում են շրջակա միջավայրի աղտոտման մեխանիկական, ֆիզիկական, քիմիական և կենսաբանական տեսակներ:

Մեխանիկական աղտոտում աղտուտման այս տեսակը կապված է քաղաքաշինության, ճանապարհաշինության, ծառահատումների և բնական լանդշաֆտների վրա ազդող այլ միջոցառումների հետ:

Ֆիզիկական աղտոտումը պայմանավորված է միջավայրի ֆիզիկական հատկությունների՝ աղմուկի, լույսի, խոնավության, ջերմությաքն ճառագայթման, էլեկտրամագնիսական դաշտի փոփոխություններով:

Քիմիական աղտոտումը պեստիցիդների, հանքային պարարտանյութերի, թունավոր գազերի, ծանր մետաղների (սնդիկ, կապար, կադմիում և այլն), տարատեսակ աղերի, ճառագայթաակտիվ տարրերի, սինթետիկ լվացամիջոցների ներգործության հետևանք է:

Կենսաբանական աղտոտումն ի հայտ է գալիս հիվանդաձին միկրոօրգանիզմների՝ բակտերիաների, սնկիկների, վիրուսների, տարածման միջոցով:



Բնական աղետների ժամանակ մարդը ենթարկվում է հոգեկան ուժեղ ցնցումների, տվյալ բնակտարածքի հողում կամ ջրում մարդու օրգանիզմին անհրաժեշտ միկրոտարրերի պակասը դառնում է մի շարք հիվանդությունների պատճառ: Մարդու տնտեսական գործունեության հետևանքով աղտոտվում են մթնոլորտը, ջրոլորտը և հողը:

Մթնոլորտ

Մթնոլորտն աղտոտում են քիմիական նյութերը, զանազան ֆիզիկական ազդակներ և միկրոօրգանիզմները, երբ դրանց արտանետվող քանակները գերազանցում են թույլատրելի կոնցենտրացիաները: Մթնոլորտն աղտոտող հիմնական նյութերից են ածխաթթվական (CO_2) ու շմոլ (CO) գազերը, ծծմբի և

ազոտի օքսիդները, ֆրեոնները և այլն: Դրանց քանակի ավելացման գլխավոր պատճառը նավթի, գազի, քարածխի, կենցաղային և արդյունաբերական թափոնների ու փայտի այրումն է: CO և CO₂ գազերի արտանետումների ամենամեծ բաժինն ընկնում է հատկապես ավտոմոբիլային տրանսպորտին: Ծծմբային գազի՝ ծծմբի երկօքսիդի (SO₂) առաջացման աղբյուրը մինչև 5–7% ծծումբ պարունակող ածխի և մազութի այրումն է: Մթնոլորտում ծծմբի երկօքսիդը փոխարկվում է ծծմբի եռօքսիդի (SO₃), որը օդում վերածվում է ծծմբական թթվի և թթվային անձրևների ձևով թափվում է գետին: Ազոտի մոնօքսիդի (NO) և ազոտի երկօքսիդի (NO₂) առաջացման հիմնական աղբյուրը բենզինով ու դիզելային վառելիքով աշխատող ներքին այրման շարժիչներն են, ազոտական թթվի արտադրությունը: NO₂-ը դեղին գույնի կայուն գազ է և մթնոլորտում պահպանվում է երկար ժամանակ: Հաճախ քաղաքների օդն այդ գազից ստանում է շագանակագույն երանգ:

Ավտոտրանսպորտի արտանետած ածխաջրածինները, հատկապես՝ քաղցկեղածին, շատ են նավթամթերքների թերայրումից առաջացող մրի ու գուդրոնի մեջ: Չափազանց վնասակար նյութեր են ֆրեոնները՝ մի շարք ածխաջրածինների հալոգեն ածանցյալները, որոնք հանգեցնում են օզոնային շերտի քայքայման, ինչի հետևանքով մեծանում է մարդկանց մաշկի քաղցկեղի առաջացման վտանգը: Գազից բացի, մթնոլորտ են թափանցում և կախույթի ձևով պահպանվում պինդ ածխածինը (մուր) և ծանր մետաղները:

Որոշակի կլիմայական պայմաններում անդրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ տեղի է ունենում օդի երկրորդային աղտոտում՝ լուսաքիմիական սմոգ, երբ առաջնային աղտոտող նյութերը քայքայվում են՝ գոյացնելով աղտոտող նոր նյութեր: Ջէկերը, արդյունաբերական ձեռնարկությունները և տրանսպորտը մթնոլորտ են արտանետում ոչ միայն վտանգավոր նյութեր, այլև մեծ քանակությամբ ջերմություն, ինչի հետևանքով մթնոլորտը տաքանում է, փոխվում են օդի խոնավությունն ու շարժունությունը՝ հանգեցնելով ջերմային աղտոտման:

Բույսերի և կենդանիների նեխման հետևանքով օդ են թափանցում նաև բազմաթիվ ախտածին մանրէներ:

Ջրուղրս

Աղտոտիչ նյութերը բնական ջրերի մեջ են թափանցում պինդ, հեղուկ, կոլոիդային, էմուլսային և գազային ձևերով: Ջրի աղտոտման հիմնական աղբյուրներն են արդյունաբերական և կենցաղային կեղտաջրերը, ձնհալի և անձրևների ժամանակ գյուղատնտեսական դաշտերից տեղափոխվող պարարտանյութերը, պեստիցիդները, անձրևի և ձյան միջոցով՝ մթնուղրոտից անջատվող զանազան նյութեր: Արդյունաբերական հոսքաջրերն առավել հաճախ աղտոտված են նավթամթերքներով, ֆենոլներով, ծանր մետաղներով և սինթետիկ լվացամիջոցներով, ներկերով, ճարպերով, որոնք վատացնում են ջրի որակը, այն դարձնում խմելու և սննդի մեջ օգտագործելու համար ոչ պիտանի. խախտվում են ջրային ավազանի կենսաբանական շարժընթացները, փոխվում է ջրային կենսաբազմազանությունը, նվազում են արտադրողականությունն ու սննդային արժեքը, որոշ ձկներ դառնում են թունավոր: Հատկապես վտանգավոր են տաք հոսքաջրերը, որոնք փոխում են ջրավազանի ջերմային ռեժիմը. վատանում են ձկների ձվադրության պայմանները, ոչնչանում են մի շարք օգտակար մանրէներ, զարգանում են մակաբույծներ:

Ներկայումս ջրային միջավայրի լրջագույն աղտոտիչ են նաև նավթն ու նավթամթերքները: Հատկապես մեծ վտանգ են ներկայացնում նավթատար խոշոր նավերի վթարները, երբ նավթն արտահոսում և աղտոտում է հսկայական ջրատարածքներ: Արտահոսած նավթը խախտում է ծովի կենսաբանական ռեժիմը, մեծ վնաս է հասցնում ձկնորսությանը, զբոսաշրջությանը: Ջրի մակերևույթից նավթը հավաքում են հատուկ նավթահավաք նավերով, հողի և ջրամբարների մաքրման համար օգտագործում են նավթով սնվող միկրոօրգանիզմներ, ինչպես նաև կիրառում ակտիվ կլանիչներ (ադսորբենտներ):

Կենցաղային հոսքաջրերը հիմնականում պարունակում են աղիքային վարակիչ հիվանդությունների հարուցիչներ:

Ջրավազանների աղտոտման առավել արտահայտված դրսևորումներից է ջրի «ծաղկումը» (էվտրոֆացում)՝ քաղցրահամ ջրավազանների վերին կենսահորիզոնում կանաչ և կապտականաչ ջրիմուռների զանգվածային բազմացումը: Ջրի «ծաղկման» յուրահատուկ օրինակ է Սևանա լճի «ծաղկումը»՝ ջրի մակարդակի իջնելուց հետո: Բնական ջրերի կարևոր առանձնահատկությունն ինքնամաքման կարողությունն է՝ գոլորշիանալու, հողի մեջ ներծծվելու և մանրէների գործունեության միջոցով: Մշակվել են բնական ջրերի արհեստական մաքրման բազմաթիվ եղանակներ. մեխանիկական եղանակով, օրինակ, մաքրվում են ջրի մեջ լողացող և կախված նյութերը:

Ջրերի մաքրման քիմիական եղանակներից կիրառվում են մակարդումը, երբ քիմիական որոշ նյութերի ազդեցությամբ ջրում եղած խառնուրդները մալ: ԼԿՅՀԳՖԵՈ կարգվում, նստում են հատակին, կլանումը՝ քիմիական որոշակի կլանիչներով ջրից կլանվում և հեռացվում են վնասակար նյութերը, քլորացումն ու օզոնացումը՝ քլորի և օզոնի միջոցով ախտահանվում է խմելու ջուրը:

Կենսաբանական մաքրման դեպքում հոսող ջրերն անցկացնում են խիտ բուսածածկի կամ փայտի թեփի միջով: Մեծ կիրառություն ունի ջրերի մաքրումն արհեստական ակտիվ տիղմով. տիղմի մեջ բազմացող մանրէներն արագ խժռում են ջրում եղած վնասակար մանրէներին:

Ջուրը տհաճ հոտով գազերից ու նյութերից մաքրելու նպատակով կիրառվում է օդավորման (աերացիա) եղանակը՝ հատուկ հարմարանքներով ջուրը հարստացվում է օդի թթվածնով:

Հող

Հողի աղտոտման հիմնական աղբյուր են արդյունաբերական, գյուղատնտեսական, կենցաղային և ճառագայթաակտիվ թափոնները: Որոշ թափոններ նեխման հետևանքով արագ քայքայվում են, սակայն շատերը պահպանվում են երկար, մասնավորապես՝ պլաստմասսայե տարաները: Այդ առումով որոշակի վտանգ են ներկայացնում նաև հանքային պարարտանյութերն ու պեստիցիդները, որոնք հակում ունեն կուտակվելու սննդային շղթայի որևէ

օղակի օրգանիզմներում՝ հանգեցնելով գենետիկական փոփոխությունների և ուռուցքների առաջացման:

Հողի աղտոտվածության հիմնական արտահայտությունը նրա վնասակար ազդեցությունն է բուսական կամ կենդանական այս կամ այն օրգանիզմի վրա: Հողը կենսոլորտի ամենակարևոր տարրերից է, կենսաբանական բազմաթիվ շարժընթացներ պայմանավորված են հատկապես հողի շերտով, այնտեղ են կուտակվում օրգանական նյութերը, զանազան քիմիական տարրեր և արևի էներգիան: Հողը կատարում է աղտոտիչների կենսաբանական կլանիչի, քայքայողի և չեզոքարարի դեր: Ուստի, հողի պաշտպանությունն առաջնակարգ դեր ունի շրջակա միջավայրի պահպանության համալիրում:

Աղտոտման դեմ պայքարն աղտոտիչների բացասական ազդեցությունից բույսերի, կենդանիների, մարդկանց և նյութական արժեքների պահպանության միջոցառումների համակարգն է: Ցանկալի արդյունքի հասնելու համար հարկավոր է նախ՝ առավելագույնս զտել արտանետվող գազերն ու հոսքաջրերը, իրականացնել շրջակա միջավայրի էկոլոգիական փորձաքննություն և աղտոտման վիճակի գնահատում, խստորեն հետևել բոլոր աղտոտիչների սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների պահպանմանը, ապա՝ ստեղծել անթափոն արտադրություններ: Բնության պահպանության, շրջակա միջավայրի վիճակի վերահսկման, որակի գնահատման, ինչպես նաև կենսամիջավայրի, էկոհամակարգերի և մարդու առողջության վրա բացասական ազդեցությունների կանխարգելման, ժամանակին հայտնաբերման ու վերացման համար ստեղծվել են բնապահպանական 1000-ից ավելի կազմակերպություններ (Բնության պահպանության միջազգային միություն, Գլոբալ էկոլոգիական հիմնադրամ, ՄԱԿ-ի Շրջակա միջավայրի ծրագիր, Վայրի բնության համաշխարհային հիմնադրամ և այլն), ընդունվել օրենքներ ու համաձայնագրեր, որոնց միացել է նաև Հայաստանը:

<http://www.encyclopedia.am/pages.php?bld=2&hld=624>



Անտառահատում

Geographic ամսագրի համաձայն , կենդանիների և բույսերի տեսակների գրեթե 70% -ը կենսակերպն վարում է անտառներում: Ըստ այդմ տարածքների կորուստը վերածվում է հազարավոր տեսակների ապրելավայրերի կորստի ,ինչը նեղացնում է սննդային շղթան և խաղտում բնական օրնաչափությունները :

Եվ ահա՝ ամենամեծ կորուստներից մեկը, որն ունենում ենք անտառահատման արդյունքում, թթվածինն է:

Մարդիկ երևի կարծում են, որ խնդիրը կլուծվի, եթե փոքր «ծառեր» տնկեն շրջակայքում բայց մի՞թե դրանք կկարողանան փոխհատուցել հսկայական կորուստը: Միանշանակ ես կանդեմ՝ ո՛չ, որովհետև, ամեն օր աշխարհում մոտավորապես 2 միլիոն ծառ է համաձայն վիճակագրական տվյալների :

Համաձայնե՛ք հսկայական թիվ է, իսկ քանի՞ փոքր ծառ է տնկվում ամեն օր: Այսինքն՝ անտառահատման առաջին բացասական կողմը թթածնի պակասելն է և ածխաթթու գազի ավելանալը: Հարկ է նշել, որ ածխաթթու գազի մեծ քանակը բերում է կլիմայի փոփոխության, որովհետև ջերմոցային գազեր (greenhouse gases) են արտանետվում միջավայր և խախտվում է ջրային ցիկլը: Ծառերը ներառված են ջրային ցիկլում, իսկ նրանց բացակայությունը կհանգեցնի կլիմայի չորացմանը, որովհետև ջուրը չի գոլոշիանա և չի վերադարձվի միջավայր: Սա վնաս է տալիս մարդուն, բայց, ավա՛ղ, մենք այս մոլորակի միակ բնակիչները չենք.կենդանիներն էլ թթվածնի կարիք ունեն, սակայն անտառը նրանց համար

միայն թթվածնի աղբյուր չէ, անտառը նրանց տուն է, որտեղ կան իրենց կենսակերպին հարմար բոլոր հարմարանքներն , ուստի անտառահատուման արդյունքում տեսակները կարող են վերանալ: Քանզի տեսակները դժվարությամբ են ինտեգրվում իրենց ոչ սեփական միջավայրում, քանի որ նրանք պետք է դիմակայեն շատ ավելի հարմարեցված այլ կենդանիների և բույսերի: Իսկ տարածքի և սննդի համար մրցակցությունը մենք գիտենք որ մեծ հավանականությամբ կհանգեցնի կենսաբազմազանության կորստին:

Բնական պաշարներ

Բնական պաշարներ-Բնական պաշարների ողջամիտ ու անվտանգ օգտագործում միտված կլինի շրջակա միջավայրի պահպանությունը Հայաստանիս բնաշխարհը ինչպես նաև բնական պաշարներն համարվում են ազգային հարստություններ:Հայաստանի անկրկնելի , բուսական ու կենդանական աշխարհը, ընդերքի պաշարամիջոցները ,մթնոլորտը, ջրային և հողային կորուստներից փրկելու ,զարգացնելու, պահպանելու համար անհրաժեշտ է ներդնել բնությանն անդառնալի վնաս չպատճառող, մի շարք միջազգայնորեն ընդունված բնապահպանական չափանիշներին համապատասխանող, բնական պաշարների ողջամիտ օգտագործումն ապահովող արտադրություններ, , չափօրինակներ, նախագծեր, սակավաթափոն արտադրատեղանակներ եւ թափոնների վերամշակման որոշակի հոսքագծեր:

▪ օրենսդրորեն այնպիսի մեխանիզմների ձեւավորումը, որոնք տնտեսվարող սուբյեկտների համար բնապահպանական միջոցառումների կիրառումը կդարձնեն տնտեսապես շահութաբեր, • պետության կողմից բնապահպանությանը նպաստող ձեռնարկումների հանդեպ հարկային, ներդրումային, վարկային քաղաքականությունների տարբերակված մոտեցման ցուցաբերումը,

- տնտեսավարման նոր պայմաններին համապատասխանող և կայուն զարգացման սկզբունքներին համահունչ բնապահպանական քաղաքականության մշակումը,
- համազգային և տեղական նշանակության բնապահպանական ծրագրերի ու ձեռնարկների իրականացման նպատակների ներդաշնակեցումը,
- համալիր էկոլոգիական գնահատման համակարգի, էկոլոգիական մոնիթորինգի ներդրումն ու զարգացումը,
- քաղաքաշինության իրականացման պատասխանատուների միջև հանրակարգային հարաբերությունների կարգավորումը,
- շրջակա միջավայրի պահպանման, խախտված էկոլոգիական հավասարակշռության վերականգման, բնապահպանական ոլորտի վերաբերյալ կարելուագույն որոշումների կայացման գործում հասարակության լայն շերտերի եւ բնապահպանական կազմակերպությունների մասնակցության ապահովումը:
 - Շրջակա միջավայրի պահպանությունը պետք է բխի հետեւյալ սկզբունքներից.
 - վերարտադրվող պաշարամիջոցների սպառման տեմպերը չպետք է գերազանցեն դրանց վերարտադրության տեմպերին,
 - չվերարտադրվող պաշարամիջոցների օգտագործումը պետք է տեղի ունենա փակ պարբերափուլերում եւ հնարավորության դեպքում փոխարինվի կայուն վերարտադրվող նմանակներով,
 - աղտոտող նյութերի արտանետման ինտենսիվությունը չպետք է գերազանցի շրջակա միջավայրի ինքնամաքման ունակությանը,
 - երբեք չպետք է խաթարվի կենսաբանական եւ լանդշաֆտային բազմազանությունը:

էկոլոգիապես մաքուր տրանսպորտ

Մենք կիրառում ենք տարբեր տեսակի հասարակական տրասպորտներ դրանք անցնու մ են հարյուրավոր կիլոմետրեր և այրում հարյուրավոր լիտր վառելիք: Բայց քաղաքների աճի հետ մեկտեղ հասարակական տրանսպորտի կարիքն

ավելանում է, ճանապարհների ծանրաբեռնվածությունը մեծանում է, դրան զուգահեռ՝ օդում արտանետվող գազերի, մուրի, փոշու և մուրի քանակը:

Ախաճնի երկօքսիդի առկայությունը արտանետվող գազերում, որը մահացու է մարդկանց և այլ կենդանի օրգանիզմների համար. հողում կուտակված ծանր մետաղների աղերի առկայությունը. Թթվային, ալկալային խմբերի ակտիվ նյութերի առկայությունը, որոնք մթնոլորտային տեղումների մեջ լուծարվելով ազդում են հողի, շենքերի կառուցվածքների վրա և աղտոտում ստորերկրյա ջրերը:

Այս ամենը անրադառնում է վարորդների, ուղեորների ու հետիոտների վրա այսինքն այս խնդիրը ևս համընդհանուր է անկախ սեռից, տարիքից, ազգությունից և գիտակցությունից: Հավանաբար, աշխարհում հրատապ կարիք կա հասարակական տրանսպորտի այնպիսի համակարգի, որը նվազագույն վնաս է հասցրել շրջակա միջավայրին և բավարարել մեր ժամանակի բնապահպանական պահանջները:

Այս առումով աշխարհի տարբեր զարգացած երկրների քաղաքներում կիրառում են որոշակի մեթոդներ, որոնք այլընտրանքային լուծումներ են առաջարկում բնության մեծ վնաս հասցնող այս խնդրին օրինակ՝

Նյու Յորք քաղաքի փողոցներով երթևեկում են հեղուկ գազով աշխատող ավտոբուսներ իսկ հին դիզելային ավտոբուսները փոխարինվում են նորերով՝ լրացուցիչ զտիչներով:

Պեկինում շրջող թվով՝ 1000 հիբրիդային ավտոբուսները 100կմ-ում ծախսում են ընդամենը՝ 29,5լ բենզին: Էլեկտարաէներգիա արտադրելու նպատակով վառելիքի այս քանակությունն չափից դուրս օգտակար է, այն անհրաժեշտ է ավտոբուսը շարժելու համար:

Լոնդոնում հիբրիդային ավտոբուսներ են հայտնվել դեռ 2006թ.մարտից Գերմանիայի Համբուրգ քաղաքում գործում է Մաքուր քաղաքային տրանսպորտ Եվրոպայի համար ծրագիրը: Ծրագիրը իր շրջանակում ներառում է թվով 30 ավտոբուսներ, որոնք աշխատում են ջրածնային էներգիայով ,իսկ ահա այս

պարագայում ջրածինը որպես վառելիք օգտագործելը հատկանշական է նրանով, որ այրվելիս առագանում է ջուր դրա հետ մեկտեղ այրման արտադրանք և գազեր չեն արտանետվում մթնոլորտ: Միակ դժվարությունը կայանում է նրանում, որ ջրածնի տարանջատումը բարդ է և ժամանակատար, սակայն ներկայումս Համբուրգի իշխանություններն ամեն ինչ անում են այս խնդիրը ևս դյուրամարս և լուծելի դարձնելու համար:

2010 թվականից Կրասնադարում բավականին հաջող են գործում էկոավտոբուսները: Դրանք բոլորն էլ էնգելսի տրոլեյբուսի գործարանի զարգացումն են: Այս ավտոբուսներն աշխատում են բնական գազով և էլեկտրականությամբ: Ինչպես բոլոր տրանսպորտային միջոցները, որոնք աշխատում են էլեկտրականությամբ, նրանք հանգիստ են, բավականին բարեհամբույր են շրջակա միջավայրի նկատմամբ՝ զգալիորեն կրճատվել է վնասակար նյութերի արտանետումները: Էկո-ավտոբուսների՝ որպես հասարակական տրանսպորտի ներդրման փորձեր այժմ իրականացվում են Ռուսաստանի շատ քաղաքներում, այդ թվում՝ Մոսկվայում: Ուստի, հաշվի առնելով համաշխարհային միտումները, կարելի է հանգիստ ենթադրել, որ Ռուսաստանի խոշոր քաղաքների հասարակական տրանսպորտի համակարգերը շուտով կարող են վերանայվել՝ էկոլոգիական ավտոբուսների ներդրմամբ:

Եզրակացություն

Բնությունը կատակներ չի ճանաչում, այն միշտ ճիշտ է, միշտ լուրջ, միշտ խիստ. սխալներն ու թյուրիմացությունները գալիս են մարդուց:

Յ.Վ.Գյոթե Բնությունից է սերում կյանքը, անկախ մեր կամքից մենք ուղիղ համեմատական ենք նրա հետ, կամա թե ակամա պարտավորենք հաշվի նստել բնության հետ ի վերջո բնությունն է ապահովում մեր առողջությունը, բարեկեցությունը, սոցիալական վիճակը, կենցաղը: Ողջ կյանքում մենք նրան անխնա շահագործում ենք օգտագործելով ամեն ինչ, չենք տալիս գրեթե ոչինչ, չարաշահելով բնության համբերությունը:

Չէ որ բնությունը միակ գիրքն է, որի յուրաքանչյուր էջ խոր իմաստ է պարունակում աստված ներում է, ներում են նաև մարդիկ ,բայց բնությունն երբեք, ուստի պետք է խնայել, սիրել, պաշտպանել, հոգալ բնության կողմից տրված բարիքները : Բնությունը մեզ օժտել է նաև բանականությամբ, որպեսզի մենք փորձենք ողջ կյանքի ընթացքում կռահել նրա հանելուկները: Ժամանակի հետ արագորեն փոխվում են պահանջները ,իսկ այդ պահանջները բավարարվում են միայն ու միայն բնության կողմից տրված բարիքներով անկախ արտադրանքի բազմազնությանը ստեղծող բազմությանը, և ստեղծվածի դրական և բացասական ազդեցությանը այս գլխապտույտ իրավիճակում հումքը միակն է՝ բնությունը: Ուստի մենք պարտավոր ենք փոխադարձ բարեխղճությամբ հարաբերվել բնության հետ: Բնապահպանության հարցում իրենց գործուն մասնակցությունը պետք է ունենա կրթական համակարգի բոլոր օղակները՝ նախադպրոցական հիմնարկները, դպրոցը, բարձրագույն ուսումնական հաստատությունները և ողջ հասարակությունը: Անհրաժեշտ է իրականացնել կազմակերպված, պլանավորված էկոլոգիական դաստիարակություն: Էկոլոգիական գիտակցության ձևավորման գործընթացում մեծ ներդրում պետք է ունենան ոչ միայն կենսաբանական ցիկլի առարկաներ դասավանդողները, այլև հանրակրթական տարբեր օղակների ուսումնառության մեջ ընդգրկված բոլոր առարկաններ դասավանդողները:

Նպատակահարմար է, որ էկոլոգիայի հիմունքներ պարտադիր լինի հումանիտար և բնագիտական առարկաները դասավանդող մասնագետների համար: Ժամանակը պահանջում է իրականացնել համալիր դաստիարակություն: Տարբեր ոլորտներ ուսումնասիրելով՝ ես առաջարկում եմ որոշակի բնապահպանական հիմնախնդիրների լուծման մատչելի ,հասանելի բանաձևեր:

Առաջարկություններ

- Ընդունել և կիրառել օրինական դաշտում բնական պաշարների արդյունավետ օգտագործման նախագիծ որը կկարգավորի, կնպաստի հետևյալ սկզբունքային խնդիրների լուծմանը: Նախագիծը պետք է ընդունման հանձնել առավելագույնս ամբողջական տեղեկատվության հիման վրա կատարել ամրապնդում համապատասխան սոցիալ տնտեսական միջոցառումներով, շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման լիարժեք համակարգի ներդրմամբ, բնական պաշարամիջոցների պահպանմամբ և իհարկե կայուն օգտագործման արտադրատեղանակների մատչելիությունն ապահովելով:

- Իսկ ահա այն բոլոր նախագծերը և միջոցառումները, որոնք միտված են աղտոտումը կանխելու իրականացման նպատակով խրախուսել հովանավորել:

- Հանրապետությունում վերահսկել և իրականացնել աղբի տեսակվորում և վերամշակում:

- Խստացնել բնապահպանության ոլորտի պահպանման եւ կարգավորման հիմնախնդիրների լուծմանն ուղղված նորմատիվային-իրավական պահանջները:

- Հիմնել հատուկ բնապահպանական հարցերով զբաղվող կառույց օրինակ՝ ոստիկանություն, որը կիրականացնի չարաշահումներին արագ արձագանքելու կամ դրանք կանխելու հիմնական գործընթացը:

- Բնապահպանական ցանկացած նորմի խախտման դեպքում կիրառել վարչական խստագույն միջոցներ՝ տույժեր եւ տուգանքներ, ինչպես նաեւ քրեական պատասխանատվության միջոցներ:

- Էկոլոգիական դաստիարակության ու մշակույթի ձեւավորման միջոցով անտառների, կանաչ տարածքների վերականգնումը եւ շրջակա միջավայրի

պահպանությունը վերածել համաժողովրդական հոգածության առարկայի՝ ծառատնկումների, տարածքների մաքրման, սիզամարգերի խնամքի գործը դարձնելով յուրաքանչյուր քաղաքացու վսեմ պարտքը:

- Գրեթե բոլորն էլ մանկուց ի վեր սիրում են թղթի վրա նկարել անտառ, կենդանիներ, արև, սակայն ցավալի է, որ այդ նկարելու թուղթը ստեղծվում է մի մեծ ծառից, իսկ մեզ հայտնի է, որ թուղթ ստանում են միայն փայտից և այլընտրանք չկա կամ նույն չափ որակով չէ. այս խնդրի համար ես առաջարկում եմ փոքրիկ և ոչ այնքան բարդ լուծում: Բոլոր երեխաներն էլ նկարում, ղգբզում ինչու չէ նաև գրում են թղթի վրա, իսկ վերջում ընտրում են լավագույնը՝ դեն նետելով մնացած չստացված և անպիտան թղթերը: Այսինքն՝ նման այլ թղթերի համար անհրաժեշտ է լինելու նորից դիմել ծառահատման տարբերակին: Խելացի երեխան ոչ թե դեն կնետի օգտագործված և ոչ պիտանի թուղթը, այլ կուղարկի վերամշակման, սակայն, եթե երեխան դրա մասին չի մտածել, խելացի ծնողը, ուսուցիչը և առահասարակ հասարակությունից որևէ մեկը կարող է հոուշել՝ երեխայի մեջ զարգացնելով թղթի վերամշակման սովորույթը: Եթե բոլոր այս նկարները վերամշակվեին, ամեն օր միջինում 17 ծառ կփրկվեր: Իմ կարծիքով, մանկուց երեխաների մեջ պետք է սերմանել սովորեցնել թուղթ խնայելու մշակույթը և դրա հումքը խնայելու անհրաժեշտությունը: •

Օգոնաքայքայող նյութերի, ավտոտրանսպորտի արտանետումների կրճատման ուղղությամբ կիրառել արդյունավետ եւ գործուն միջոցներ: • Տրանսպորտային միջոցները համալրել՝ հեղուկ, հիբրիդային և ջրախնային գազերով աշխատող ավտոբուսներով հետևելով աշխարհի մեծ և զարգացած քաղաքների օրինակին չմոռանանք նաև էկո ավտոբուսների մասին, արևային էներգիան օգտագործել, որպես շարժիչ ուժ:

- Վճռականորեն կասեցնել հայրենի բնության ինքնատիպ կենդանական աշխարհն ամլացնող համատարած որսագողությունը եւ անօրինական անտառահատումները:

- Անհապաղ միջոցներ ձեռնարկել Երկրի տարբեր մասերում անապատացման վերահաս վտանգը կանխելու համար:

- Արդյունավետ եւ խստագույն պայքար մղել քաղաքաշինական նորմերի խախտմամբ իրականացվող շինարարության դեմ:

- Վերը թվարկված խնդիրները լուծելու նպատակով լրամշակել «Ջրային օրենսգիրքը», «Անտառային օրենսգիրքը», «Ընդերքի մասին օրենսգիրքը», «Ընդերքն օգտակար հանածոների շահագործման նպատակով ուսումնասիրության եւ արդյունահանման համար տրամադրելու (կոնցեսիայի) մասին», «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» օրենքները:

- Փոփոխություն կատարել բնօգտագործման հարկատեսակների մասին օրենքում՝ ներմուծվող ավտոմեքենաների հարկման չափը դնելով կախվածության մեջ ոչ թե մեքենայի գնից, այլ շարժիչի ծավալից եւ օգտագործվող վառելանյութի տեսակից:

- Դառնանք էկո ակտիվիստ, որպեսզի խնայենք բնական պաշարները. Որպես էներգիայի այլ ընտրանքային աղբյուր օգտագործել արևը, ջուրը և քամին, որպես բնության վերականգնվող պաշարներ:

Գրականության ցանկ

1. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B5%D6%80%D5%AF%D5%AB%D6%80>
2. <http://www.encyclopedia.am/pages.php?bld=2&hld=624>
<https://mehrabyanani.wordpress.com/> <https://hy.wikipedia.org> <http://www.mnp.am/>
3. <https://ace.aua.am/hy/environmental>
4. <education/een/competition/https://www.isec.am/departments/environmental>
5. <protection-and-nature-management.html> <https://www.ecoinspect.am/hy>
6. <https://www.ekoloji.com/hy/ekoloji/cevre-ekoloji-ve-iklim/>
7. <https://tondrak.am/ecology/> <https://www.yell.am/company>
8. <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140528>
9. <https://artsakhib.am/wp-content/uploads/2019/04/Babayan-Gexecik-Ekologia-1.pdf>